ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ապրիլի 2016թ. N 36 - Ա

«ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 5-Ի N 243-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով, 67-րդ հոդվածի 1-ին կետի «ա» և «է» ենթակետերով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 17-ի N 1474-Ա որոշման 7-րդ և N 3 հավելվածի 2-րդ կետերի, **ո ր ո շ ու մ եմ՝**

1. << Գորիսի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության 33702800 ՀՀ դրամ կազմող կանոնադրական կապիտալը ավելացնել 68642400 ՀՀ դրամով՝ լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման միջոցով: Ավելացումից հետո կանոնադրական կապիտալը սահմանել 102345200 ՀՀ դրամ:

2. Հաստատել կանոնադրության փոփոխությունը և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2007 թվականի հոկտեմբերի 5-ի N 243 որոշմամբ հաստատված «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 102345200 ՀՀ դրամ , որը կազմում է 662 հատ հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 154600 ՀՀ դրամ:

Ընկերության բոլոր 662 սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ /սովորական/ են»:

3. Հանձնարարել «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ ապահովել կանոնադրության փոփոխության պետական գրանցումը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2016թ. ապրիլի 19
ք. Կապան